# ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

***04.05.2008թ. նիստին***

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Գ.Անանյանը, Յու. Պողոսյանը, Ա.Շաբոյանը, Վ. Դավթյանը, Ա.Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գյուլբենկյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի բաժնի գլխավոր մասնագետ Գ. Խաչատրյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Կարապետյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Եղիազարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ա. Պետրոսյանը:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

**1. «Անհատական բնակարանային շինարարության հետազոտության հարցաթերթը և լրացման կարգը» հաստատելու մասին հարցը:**

***/Զեկուցող՝ Լ.Պետրոսյան/***

**Որոշեցին՝**

Հաստատել «Անհատական բնակարանային շինարարության հետազոտության հարցաթերթը և լրացման կարգը»՝ համաձայն հավելվածի:

*Անհատական/*

**2. «Կազմակերպությունների կողմից կատարված բնապահպանական ծախսերի հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:**

***/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/***

**Որոշեցին՝**

Հաստատել «Կազմակերպությունների կողմից կատարված բնապահպանական ծախսերի հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը»՝ համաձայն հավելվածի:

*/Միաձայն/*

**3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

3.1. Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 02.03–31.03.2008թ. տեղի ունեցած Ֆրանսիայի Ժողովրդագրական հետազոտությունների ազգային ինստիտուտի (INED) «Մահացության պատճառները Կովկասում և Կենտրոնական Ասիայում» ծրագրի շրջանակում՝ Հայաստանի Հանրապետության մասով, ժողովրդագրական ցուցանիշների (ծննդյան, մահվան, այդ թվում՝ մանկական մահացության, դրա պատճառների, սեռատարիքային կառուցվածքի), դրանց ամբողջականությանն ու ընդգրկվածությանն առնչվող հարցերի ուսումնասիրության, տեղեկատվական և համեմատական վերլուծությունների (Հայաստանի և Վրաստանի) նախապատրաստման աշխատանքներին գործնական մասնակցություն ունենալու,

3.2. Մեծ Բրիտանիայի Կարդիֆ քաղաքում տեղի ունեցած 01-03.04.2008թ. «Բիզնես ռեգիստր» թեմայով ուսումնական այցելությանը մասնակցելու,

3.3. Մեծ Բրիտանիայի Կարդիֆ քաղաքում 07-09.04.2008թ. տեղի ունեցած Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ՏԱՄԻՍ ծրագրի «Շինարարության վիճակագրություն» նախագծի շրջանակում աշխատանքային հանդիպմանը մասնակցելու,

3.4. Շվեյցարիայի Ժնև քաղաքում 07.04–10.04.2008թ. տեղի ունեցած Աշխատանքի Միջազգային Կազմակերպության (ԱՄԿ) հրավերով «Աշխատաժամանակի հաշվառում» խորագրով աշխատանքի վիճակագրության փորձագետների հանդիպումներին մասնակցելու վերաբերյալ:

**Որոշեցին՝**

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

*/Միաձայն/*

**4.** «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2006 թվականին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված

հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Հայաստանի ամերիկյան համալսարանի Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոնին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող*՝ Դ. Մարտիրոսովա/

**Որոշեցին՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոնին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից, 2006 թվականին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

*/Անհատական/*

4.1. «Լսեցին ՎՊԽ անդամ Վ.Դավթյանի հաղորդումը՝ Internet Securities Inc.( ISI) տվյալների բազայում, ԱՎԾ ինտերնետային կայքի նյութերը տեղադրելու վերաբերյալ:

**Որոշեցին՝**

Հանձնարարել ՎՊԽ անդամ Վ.Դավթյանին առաջիկա երկու ամսվա ընթացքում մանրամասն ծանոթանալ ISI Emerging Markets-ի տվյալների բազայում ԱՎԾ ինտերնետային կայքի նյութերի տեղադրման և օգտագործման սկզբունքներին, և ՎՊԽ–ին ներկայացնել առաջարկություններ ISI Emerging Markets–ի հետ հետագա համագործակցության վերաբերյալ:

***02.06. 2008թ. նիստին***

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Գ.Անանյանը, Յու. Պողոսյանը, Ա. Շաբոյանը, Վ. Դավթյանը, Ա.Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության

և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա.Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

**1. «Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալները հաստատելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալները՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

**2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

2.1 Լյուքսեմբուրգ քաղաքում 06.05-08.05.2008թ. տեղի ունեցած, Եվրոստատի և ՄԱԿ-ի վիճակագրության վարչության համատեղ «Ազգային հաշիվները համագործակցության զարգացման ենթատեքստով» վերնագրով գիտաժողովին,

2.2. Ավստրիայի Վիեննա քաղաքում 07.04-11.04.2008թ. տեղի ունեցած «Վճարային հաշվեկշռի ձեռնարկ 6» նախագծի հիմնական առանձնահատկությունները, դրա ներդրման հետ կապված խնդիրները և իրատեսական ժամանակահատվածը» թեմայով սեմինարին,

2.3. Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրան քաղաքում տեղի ունեցած 19.04-07.05.2008թ. «ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի (UNSIAP) կողմից կազմակերպված Տնային տնտեսությունների և ձեռնարկությունների ընտրանքի մշակում» թեմայով դասընթացին,

2.4. Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 28.04-30.04.2008թ. տեղի ունեցած Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ՏԱՍԻՍ ծրագրի «Վիճակագրություն-10» պայմանագրի «Աշխատանքի շուկայի վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում Հունգարիայի կենտրոնական վիճակագրական գրասենյակի (ՀԿՎԳ) կողմից կազմակերպված «Ոչ ֆորմալ հատվածի զբաղվածության գնահատումը՝ հիմնված տնային տնտեսություններում աշխատուժի հետազոտության (ԱՀ) վրա» թեմայով ուսուցողական այցին,

2.5. Իտալիայի Տուրին քաղաքում 16.05.2008թ. տեղի ունեցած Եվրոպայի ուսումնական հիմնադրամի (ԵՈՒՀ) կողմից կազմակերպված «Աշխատանքի շուկայի համայնապատկերը Սևծովյան տարածաշրջանում և Տաջիկստանում» խորագրով և տարածաշրջանի աշխատաշուկաների առկա իրավիճակը և զարգացման միտումները համակողմանիորեն նկարագրող ազգային զեկույցների պատրաստման նպատակով առաջին հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ հաղորդումները:

Որոշեցին՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

*/Անհատական/*

***19.06. 2008թ. նիստին***

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Գ.Անանյանը, Յու. Պողոսյանը, Ա. Շաբոյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գյուլբենկյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

**1. «Առևտրի հավելագնի վերաբերյալ» Ձև թիվ 1-ԱՀ և «Տրանսպորտային հավելագնի վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏՀ միանվագ հետազոտության հարցաթերթերը և դրանց լրացման հրահանգները հաստատելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Լ. Խաչատրյան/*

Որոշեցին՝

Հաստատել «Առևտրի հավելագնի վերաբերյալ» Ձև թիվ 1-ԱՀ և «Տրանսպորտային հավելագնի վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏՀ միանվագ հետազոտության հարցաթերթերը և դրանց լրացման հրահանգները համաձայն հավելվածների:

*/Նորմատիվ/*

**2. «Աշխատուժի միանվագ հետազոտության հարցաթերթի» և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

Որոշեցին՝

Հաստատել «Աշխատուժի միանվագ հետազոտության հարցաթերթը» և լրացման մեթոդական ցուցումները՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

**3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2006թ. տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Ասիական զարգացման բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ Ասիական զարգացման բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2006 թվականի տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ տրամադրվող անվանազերծված տեղեկատվությունը զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

**4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

4.1. Շվեյցարիայի Ժնև քաղաքում 13.05-15.05.2008թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) և Եվրամիության վիճակագրական

ծառայության (Եվրոստատի) հրավերով «Մարդահամարներ և կացարանների հաշվառումներ» խորագրով աշխատանքային հանդիպմանը,

4.2 Ֆիլիպինների Մանիլա քաղաքում 20.05-23.05.2008թ. տեղի ունեցած Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից կազմակերպած «Ոչ ֆորմալ հատվածի գնահատումը» թեմայով սեմինարին,

4.3. Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում 26.05-30.05. 2008թ. տեղի ունեցած «Շրջակա միջավայրի վիճակագրություն» ծրագրի շրջանակում ուսումնական այցելությանը մասնակցելու վերաբերյալ հաղորդումները:

**Որոշեցին՝**

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումները ընդունել ի գիտություն

*/Անհատական/*